ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMATS
Closed Joint-Stock Company
АРМАЭРОНАВИГАЦИЯ
закрытое акционерное общество
AB certification

I.Gasparyan 33, Yerevan 0042, Republic of Armenia,
Tel. +374 10 292929 (366), e-mail: staff@armats.am

№ 8.1- 279
<< 14 >> 06 2022

<<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ
Տնօրեն՝ Վ. Բաղդասարյանին

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի Վ. Բաղդասարյան

Հայտնում ենք Ձեզ, որ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի կարիքների համար <<տեխնիկական ստուգման>> ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ-05/21>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից՝ <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ և <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ միջև 19.02.2021թ. կնքվել է թիվ 2.17 գնման պայմանագիրը:

Վերոգրյալ պայմանագրի 7.15 կետի համաձայն <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ կողմից 2022թվականի համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ և համապատասխան համաձայնագիրը <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ աշխատակցի միջոցով առձեռն մի քանի անգամ ուղարկվել է ք. Երևան, Մյասնիկյան 22/4 հասցեով <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ին հաստատման, սակայն ապարդյուն, քանի որ <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ն փաստացի գործունեություն չի վարում, ինչպես նաև հեռախոսազանգերին չի պատասխանում:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ սույնով <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն ծանուցում է Ձեզ, որ միակողմանի լուծում է 19.02.2021թ.-ին կնքված թիվ 2.17 պայմանագիրը:

Ա.Գասպարյան
Գլխավոր տնօրեն